ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ ԷԴՎԱՐԴ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՄՈՏ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 25-ԻՆ, ԺԱՄԸ 11:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ

- ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալ՝ Առնակ Ավետիսյանի
- ՀՀ Արմավիրի մարզպետարանի գլխավոր քարտուղար՝ Արամ Հովհաննիսյանի
- ՀՀ Արմավիրի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ՝ Արթուր Այվազյանի
- ՀՀ Արմավիրի մարզի տարածքում մթերումներ իրականացնող կազմակերպությունների ներկայացուցիչներ՝
  - <<Երևանի կոնյակի գործարան>> ՓԲԸ–ի մթերման պատասխանատու՝ Գեղամ Ղազարյանի
  - <<ՄԱՊ>> ՓԲԸ–ի տնօրեն՝ Մակար Պետրոսյանի
  - << Նոյան >> մրգերի և բանջարեղենի վերամշակման գործարանի գլխավոր տնօրեն՝ Վահե Ղազարյանի
  - << Պռոշյանի կոնյակի գործարան >> ՍՊԸ–ի արտադրության պետ՝ Աշոտ Հակոբյանի
  - << Իջևանի գինու, կոնյակի գործարան >> ՓԲԸ–ի պատասխանատու՝ Սանդրո Աբովյանի
  - << Սամկոն >> ՍՊԸ–ի մթերման պատասխանատու՝ Միեր Դավիդյանի
  - << Երևանի Արարատ կոնյակի-գինու-օղու կոմբինատ >> ԲԲԸ–ի/գ.Ամասիա/ պունկտի տնօրեն՝ Ռուդիկ Խլղաթյանի
  - <<Գուրմանե>> ՍՊԸ–ի տնօրեն ՝ Դավիդ Հարությունյանի
  - << Արմավիր Ֆրութ>> ՍՊԸ չրագործական ընկերության տնօրեն՝ Հայկ Մանուկյանի
  - <<Ալվան>> ՍՊԸ–ի պունկտի տնօրեն ՝ Կառլեն Աղաբեկյանի

- << Ջրաղացպանյան Վայների >>

  ՍՊԸ–ի տնօրեն՝ Արտաշես Ջրաղացպանյանի

- Լրատվամիջոցների ներկայացուցիչների

Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ո Ւ Մ՝

1. **2022 թվականին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում գյուղատնտեսական մթերքների մթերման և վերամշակման աշխատանքների կազմակերպման միջոցառումների մասին**

/ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ – Էդվարդ Հովհաննիսյան/

Մինչև օրակարգային հարցին անդրադառնալը, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանը, ողջունելով խորհրդակցությանը մասնակցող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի տարածքից մթերումներ իրականացնող կազմակերպությունների ղեկավարներին և ներկայացուցիչներին, նշեց, որ ագրովերամշակող արդյունաբերությունը միշտ էլ համարվել է մեր երկրի տնտեսության կարևորագույն և բարձր արդյունավետությամբ աշխատող ճյուղերից մեկը, որը շատ է կարևորվում նաև գյուղական բնակչության զբաղվածության ու եկամուտների ապահովման առումով և նպաստում է պարենային, տնտեսական անվտանգության և ագրոպարենային քաղաքակիրթ շուկայի ձևավորմանը: Ավելին, արդեն ակնհայտ է, որ վերամշակման համակարգի գործունեության ակտիվացումը, գյուղատնտեսական մթերքների մթերման և արտահանման ծավալների աստիճանական ավելացումը որոշակիորեն նպաստել են երկրում առկա գյուղատնտեսական արտադրանքի իրացման հիմնախնդրի մեղմմանը և գյուղատնտեսական արտադրության ապրանքայնության մակարդակի բարձրացմանը: Ուստի այսօրվա խորհրդակցության հրավիրման հիմնական նպատակը 2022 թվականին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզից գյուղատնտեսական մթերքների մթերման և վերամշակման աշխատանքների կազմակերպման գործընթացում առկա բոլոր խնդիրների համատեղ քննարկումն է պարզելու և հստակեցնելու, թե արդյո՞ք կարելի է ակնկալել նախորդ տարիների մթերման ծավալներ:

Մտքերի փոխանակությանը մասնակցած Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի տարածքից մթերումներ իրականացնող կազմակերպությունների

ղեկավարներից և ներկայացուցիչներից յուրաքանչյուրը ներկայացրեց մթերումների և արտադրանքի իրացման ոլորտի իր կազմակերպությունում առկա հիմնախնդիրները: Այսպես, **<<Երևանի կոնյակի գործարան>> ՓԲԸ**-ի ներկայացուցիչ, մթերման պատասխանատու Գեղամ Ղազարյանը նշեց, որ գործարանն արդեն սկսել է մթերման պայմանագրեր կնքել նաև Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի արտադրողների հետ: Արդյունքում արդեն 102 խաղողագործների հետ կնքվել են ընդհանուր ծավալով 7163 տոննայի պայմանագրեր և կնքման գործընթացը շարունակվում է: Նա նշեց նաև, որ կնքված պայմանագրերի շրջանակներում գործարանը արտադրողներին հետվճարային եղանակով նաև համապատասխան բուժանյութեր է տրամադրում և արդեն երրորդ տարին է, որ գինը նշվում է պայմանագրում: Նա միաժամանակ հավաստիացրեց, որ այս տարի կաշխատեն պահպանել նախորդ տարվա մթերման ծավալները և մթերումը կիրականացվի կիլոգրամը 155 դրամով: Ի դեպ, նախորդ տարի գործարանը միայն Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզից մթերել է 11452 տոննա խաղող, կիլոգրամը 155 դրամով:

<<ՄԱՊ>> ՓԲԸ-ի տնօրեն Մակար Պետրոսյանը նշեց,որ այս տարի գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի ապրիլի 15-ի N 506-Լ որոշմամբ տրամադրվող վարկային ծրագրից օգտվելու համար մթերողները մինչև ընթացիկ տարվա հունիսի 1-ը պետք է արդեն կնքած լինեն պայմանագրերը: Այս առումով, սակայն, նշված ժամկետի մասով գործնականում առկա են դառնում որոշակի անհարմարություններ: Ցանկալի կլիներ, որ այդ ժամկետն իր մեջ ընդգրկեր գոնե հուլիսի 1-ից մինչև օգոստոսի 1-ը ընկած ժամանակաշրջանը, քանի որ նշված պայմանագրերի կնքման ժամկետը որքան մոտ լիներ խաղողի մթերումների ժամկետներին, այնքան ավելի հստակ կլինեին խաղողի մթերման ծավալները: Այդուհանդերձ, <<ՄԱՊ>> ՓԲԸ-ի տնօրեն Մակար Պետրոսյանի հավաստմամբ ընկերությունը կկնքի շուրջ 15000 տոննա խաղողի մթերման պայմանագիր (2021 թվականին մթերվել է 15480 տոննա խաղող, կիլոգրամը 130 դրամով): <<ՄԱՊ>> ընկերությունը խաղողը մթերում է գինու և կոնյակի արտադրության համար: Նախնական պլանավորմամբ ընկերությունը <<Պրեմիում>> տեսակի բարձր որակի գինիների արտադրության համար պայմանագրային հիմունքներով այս տարի խաղողը կմթերի կիլոգրամը 250 դրամով, իսկ <<Ռոյալ>> տեսակի գինու և մյուս

արտադրատեսակների համար շուկան ցույց կտա և միայն այդ ժամանակ կորոշվի մթերման գինը: <<ՄԱՊ>> ՓԲԸ-ի տնօրեն Մակար Պետրոսյանը, բացի խաղողի մթերումից, անդրադարձավ նաև ընկերության կողմից այս տարի մթերվող մյուս գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) ուղղությամբ տարվող աշխատանքներին: Այսպես, նա նշեց,որ նախորդ տարի ընկերության կողմից մթերվել է ընդամենը 1298 տոննա գյուղատնտեսական հումքի այլ մթերք, որից 1244 տոննա բանջարեղեն (ամբողջությամբ՝ լոլիկ) և 54 տոննա պտուղ:

<< Սամկոն >> ՍՊԸ-ի մթերման պատասխանատու Միեր Դավիդյանը, նշեց, որ նախորդ տարի ընկերությունը Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզից մթերել է 13890 տոննա խաղող, կիլոգրամը 130 դրամով: Նա միաժամանակ նշեց,որ այս տարի ընկերությունը կօգտվի գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով պետության կողմից տրամադրվող վարկային ծրագրից և հավաստիացրեց, որ հնարավորինս կպահպանեն նախորդ տարվա մթերումների ծավալները:

<< Պռոշյանի կոնյակի գործարան >> ՍՊԸ-ի արտադրության պետ Աշոտ Հակոբյանը նշեց, որ նախորդ տարի ընկերությունը Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզից մթերել է 28356 տոննա խաղող, կիլոգրամը 130 դրամով: նա նշեց, նաև, որ նախորդ տարի ընկերության կողմից մթերվել է ընդամենը 7660 տոննա գյուղատնտեսական հումքի այլ մթերք, որից 3960 տոննա բանջարեղեն (որից միայն լոլիկ՝ 800 տոննա) և 3700 տոննա պտուղ: Ընկերությունը մայիսի 5-ից կսկսի այս տարվա մթերման պայմանագրերի կնքումը և տեխնիկական պատճառներով պայմանավորված մթերումների ծավալները նախորդ տարվա համեմատ կլինեն մի փոքր պակաս:

<< Իջևանի գինու, կոնյակի գործարան >> ՓԲԸ-ի պատասխանատու Սանդրո Աբովյանը նշեց, որ նախորդ տարի ընկերությունը Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզից մթերել է 6970 տոննա խաղող, կիլոգրամը 130 դրամով: Նա միաժամանակ նշեց, որ ընկերությունում առկա տեխնիկական պատճառներով պայմանավորված մթերումների ծավալները նախորդ տարվա համեմատ կլինեն ավելի պակաս՝ կմթերվի շուրջ 3000 տոննա խաղող: Նա նշեց, նաև, որ նախորդ տարի ընկերության կողմից մթերվել է ընդամենը 99 տոննա գյուղատնտեսական հումքի այլ մթերք, որից 29 տոննա բանջարեղեն և 70 տոննա պտուղ: Ընկերության պատասխանատուն նշեց, որ ընկերությունն արդեն սկսել և գրեթե ավարտել է

գյուղատնտեսական հումքի այլ մթերքների մթերումների պայմանագրերի կքումը Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ակնալիճ և Եղեգնուտ գյուղերի պտուղ-բանջարեղեն աճեցնող հողագործների հետ, հավաստիացնելով, որ այս տարի միայն գյուղատնտեսական հումքի այլ մթերքների մթերումների ծավալը կկազմի շուրջ 2000 տոննա:

<< **Ջրաղացպանյան Վայների** >> **ՍՊԸ**-ի տնօրեն Արտաշես Ջրաղացպանյանը նշեց, որ նախորդ տարի ընկերությունը մթերել է ընդամենը 54 տոննա խաղող, կիլոգրամը 130 դրամով: Նա միաժամանակ հավաստիացրեց, որ ընկերությունը մրգային գինիներ արտադրելու համար այս տարի կմթերի շուրջ 400 տոննա, իսկ պահանջարկ լինելու, ինչպես նաև իրացման խնդիրների լուծման դեպքում՝ մինչև 800 տոննա խաղող:

<< **Նոյան** >> մրգերի և բանջարեղենի վերամշակման գործարանի գլխավոր տնօրեն Վահե Ղազարյանը նշեց, որ նախորդ տարի ընկերությունը մթերել է 3600 տոննա պտուղ: Նա նշեց նաև, որ գործարանն այս տարի լոլիկ արտադրելու համար կմշակի 100 հեկտար հողատարածք (կմթերվի շուրջ 500 տոննա), որի նպատակը Հայկական բանակին որակյալ բանջարեղենային արտադրանքով ապահովելն է:

<<**Գուրմանե**>> **ՍՊԸ**-ի տնօրեն Դավիդ Հարությունյանը նշեց, որ նախորդ տարի ընկերության կողմից մթերվել է ընդամենը 35 տոննա գյուղատնտեսական հումքի այլ մթերք (բանջարեղեն), որից 2 տոննա լոլիկ և 11 տոննա պտուղ: Նա միաժամանակ հավաստիացրեց, որ հարավորինս կպահպանեն նախորդ տարվա մթերումների ծավալները:

<< **Արմավիր Ֆրութ**>> **ՍՊԸ** չրագործական ընկերության տնօրեն Հայկ Մանուկյանը նշեց, որ նախորդ տարի ընկերության կողմից մթերվել է 500 տոննա պտուղ: Ընկերությունը նկատելիորեն կմեծացնի այս տարվա մթերումների ծավալները նախորդ տարվա համեմատ, հասցնելով շուրջ 2000 տոննայի, որի արդյունքում նախատեսվում է արտահանել 2,5-ից 3,0 մլն տուփ տարատեսակ մուրաբաներ և խավիար:

Նա միաժամանակ նշեց նաև, որ ընկերությունը որոշակի դժվարություններ ունի միայն պարարտանյութերի ձեռքբերման գործում:

Այնուհետև, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանը, անդրադառնալով օրակարգային հարցի քննարկմանը ներկա բոլոր մասնակիցների արտահայտած հիմնական մտահոգություններին, մասնավորապես

նշեց, որ մթերման համապատասխան պայմանագրերի կնքման ժամկետների մասով համամիտ է մթերող կազմակերպությունների ներկայացուցիչների այն կարծիքին, որ որքան մոտենա բերքահավաքի սեզոնը, այնքան կանխատեսումներն ավելի հստակ կլինեն, արդյունքում հնարավոր կլինի իրատեսորեն գնահատել մթերման ծավալներն ու ժամանակային առումով տրամադրվող վարկից օգտվելու համար գործնականում օբյեկտիվ չի պայմանագրերում նման ժամկետի ամրագրումը: Ավելին, ինչպես նշեց մարզպետը, տեսականորեն հնարավոր են դեպքեր, երբ շահառուները կնքելով մթերումների պայմանագրեր, օգտվեն տվյալ վարկավորման ծրագրից և հետագայում տարաբնույթ պատճառներով չկարողանան ապահովել կնքված պայմանագրում նշված ծավալի մթերումներ: Ուստի մթերումների պայմանագրերի կնքման ավելի ուշ ժամկետներ սահմանելը գործնականում հնարավորություն է տալիս ավելի տեսանելի դարձնել մթերումների ծավալները և նպաստում մթերումների գործընթացի նկատմամբ արդյունավետ վերահսկողության ապահովմանը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից նախատեսված վարկային ծրագրի նպատակային իրագործման իմաստով հնարավորինս օբյեկտիվ, ամբողջական և տեսանելի դաշտ ստեղծելուն: Այդ նպատակով մարզային իշխանությունը հետևողական կլինի և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում գյուղատնտեսական մթերքների մթերումնրի ամբողջ գործընթացը կգտնվի նրա անմիջական վերահսկողության ներքո:

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանը խորհրդակցության մասնակիցներին միաժամանակ տեղեկացրեց, որ անկախ նշված խնդրի ներկա քննարկումից, ինքն արդեն պատկան մարմիններին ներկայացրել է պայմանագրային ժամկետներին վերաբերող խնդիրը:

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանը, անդրադառնալով նաև արտահանման խնդիրներին, նշեց, որ չնայած նախորդ տարվա աշխարհաքաղաքական փոփոխությունները լուրջ հարված հասցրեցին արտահանումների գործընթացին, որի պատճառով մթերողների մեծ մասը դեռևս որոշակի քանակությամբ պահեստավորված արտադրանք ունի, այդուհանդերձ, մթերող կազմակերպությունների ղեկավարներին հորդորեց ֆինանսատնտեսական ճգնաժամը և դրա հետ կապված պատրաստի արտադրանքի իրացման դժվարություններն առիթ չդարձնել մթերումների ծավալները կրճատելու և գյուղացիական տնտեսությունների կողմից արտադրված բերքն ավելի ցածր գներով

մթերելու համար: Ավելին, մթերման գործընթացում առաջացած խնդիրները պետք է լուծվեն գյուղացի-վերամշակող կազմակերպություն հարաբերություններում վաղորոք ձեռք բերված պայմանավորվածությունների համաձայն:

Օրակարգային հարցի քննարկման ավարտմամբ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ էդվարդ Հովհաննիսյանը, շնորհակալություն հայտնելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզից մթերումներ կատարող կազմակերպությունների ղեկավարներին և ներկայացուցիչներին խորհրդակցությանը մասնակցելու համար, խորհրդակցությունը հայտարարեց ավարտված:

5/16/2022

X

VERIFIED OCSP 5/16/2022 13:59:10 GMT+4

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: HOVHANNISYAN EDVARD 2001830505

ԷԴՎԱՐԴ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Արձ.՝Քարտուղարության պետ՝
Դ.Դավթյան